Հավաստման ընթացակարգ

1. Նույնականացման ունիկալ կոդի մուտքագրումն ունի բնօրինակ ստորագրման հավասարազոր իրավական ուժ և դրա մուտքագրումը հիմք է Բանկի համար՝ Մոբայլ-բանկինգ ծրագրում հրահանգներով տրված ֆինանսական գործարքների իրականացման համար:
2. Բանկն իրավունք ունի Հաճախորդից պահանջել փոխել գաղտնաբառը, եթե առաջացել է գաղտնաբառի հրապարակման վտանգ կամ այն արդեն հրապարակվել կամ այլ կերպ հայտնի է դարձել այլ անձանց:
3. Օգտանունը և գաղտնաբառը Հաճախորդին հանձնելու պահից դրանց անվտանգ և գաղտնի պահպանության պատասխանատվությունը ստանձնում է Հաճախորդը:
4. Յուրաքանչյուր Կողմ պարտավորվում է առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնության Պայմանագրի հետ չկապված նպատակներով չօգտագործել և որևէ երրորդ անձի չհաղորդել, բացառությամբ ստորև նշվածների, Պայմանագրին առնչվող ցանկացած տեղեկություն, որը հանդիսանում է կամ կարող է հանդիսանալ բանկային, առևտրային և օրենքով պահպանվող այլ գաղտնիք, ինչպես նաև ՀՀ գործող օրենսդրությամբ գաղտնի համարվող այլ տեղեկատվություն:
5. Բանկը Հաճախորդին ծառայություններ մատուցելիս առաջնորդվում է այն կանխավարկածով, որ Հաճախորդի կողմից կատարված բոլոր գործարքները և տրված բոլոր հանձնարարականները համապատասխանում են Հաճախորդի կամքին և ցանկությանը և կատարվում են վերջինիս գիտությամբ, քանի դեռ ՀՀ օրենքով սահմանված կարգով հակառակը չի ապացուցվել կամ Հաճախորդը չի հայտնել այդ մասին Բանկին: